ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5293-Ա « 29 » հոկտեմբերի 2026թ.

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Հրանտ Մարտիրոսյանի լիազորված անձ, Նորայր Մարտիրոսյանի դիմումը՝ Դավթաշենի 4-րդ թաղամասի հ.2ա շենքի հ.23 ավտոտնակի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 01.02.2023թ. հ.01022023-01-0234 վկայական) զբաղեցրած հողամասի համար կնքված վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին:

Դավթաշենի 4-րդ թաղամասի հ.2ա շենքի հ.23 ավտոտնակի կադաստրային արժեքը կազմում է 1,621,069 ՀՀ դրամ:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների 1-ին մասերով, ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, Երևան քաղաքի ավագանու 2025թ. դեկտեմբերի 23-ի հ.463-Ն որոշման հավելվածով.

1.Լիազորել Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավար Ալբերտ Հովասափյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից, Հրանտ Մարտիրոսյանի հետ կնքել համաձայնագիր՝ Դավթաշենի 4-րդ թաղամասի հ.2ա շենքի հ.23 ավտոտնակի զբաղեցրած 19.91քմ մակերեսով հողամասի համար 29.10.2018թ. կնքված վարձակալության հ.28971 պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու և դրանում փոփոխություններ ու լրացում կատարելու մասին՝ ներառելով պայմանագրի հետևյալ փոփոխություններն ու լրացումը.

1) պայմանագրում՝ «Սվետա Ալեքսանդրի Հարոսյանը (հասցեն՝ ք.Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ. հ.33/1 շենք, բն. Հ.15, անձնագիր՝ AM0323078, տրվ. 03.06.2011թ. 004-ի կողմից, ծնվ. 12.12.1973թ.) և Ալինա Հակոբի Հակոբյանը (հասցեն՝ ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ. հ.33/1 շենք, բն. հ.42, անձնագիր՝ AN0620746, տրվ. 21.08.2013թ. 013-ի կողմից, ծնվ. 02.12.1947թ.)» բառերը փոխարինել «Հրանտ Նորայրի Մարտիրոսյանը (անձնագիր՝ 76 3679734, տրվ. 01.12.2020թ. ՆԳՆ 77432 կողմից, ծնվ. 10.12.1985թ.)» բառերով.

2) պայմանագրի 18-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2031 թվականի նոյեմբերի 1-ը:».

3)պայմանագրի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Հողամասի տարեկան վարձավճարը՝ համաձայն Երևան քաղաքի ավագանու 2025թ. դեկտեմբերի 23-ի հ.463-Ն որոշման հավելվածի 40-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերության՝ կազմում է 11,729 /տասնմեկ հազար յոթ հարյուր քսանինը/ ՀՀ դրամ (19.91քմ x 58,908 ՀՀ դրամ x 1%): Պայմանագրի կնքման պահին հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը 1քմ-ի համար կազմում է 58,908 ՀՀ դրամ:»:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված համաձայնագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ